

Թ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ՔԱՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ներկայումս Արարատյան հարթավայրի պայմաններում լայն թափ է ստացել բանջարանոցային կուլտուրաների մշակումը: Բանջարանոցային կուլտուրաների թվին է դասվում նաև բամիան (*Hibiscus esculentus*), որն արտագրուկյան մեջ լայն տարածում չի ստացել: Մինչդեռ բամիան՝ որպես բանջարանոցային կուլտուրա, որոշակի արժեք է ներկայացնում:

Մեր նպատակն է եղել Արարատյան հարթավայրի պայմաններում ուսումնասիրել և ընտրել բամիայի մի շարք սորտեր և տարատեսակներ: Աշխատանքը կատարվել է 1964—1966 թվականների ընթացքում, Նրևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի փորձակայանում: Ելանյութն ստացվել է Համամիութենական բուսաբուծության ինստիտուտից, այդ ինստիտուտին կից Վոլգոգրադի փորձակայանից, ինչպես նաև Տաշքենդի գյուղատնտեսական ինստիտուտից:

Գրականության մեջ հայտնի բամիայի 8 տարատեսակներից մեր կողմից ուսումնասիրվել են 4-ը և մի շարք սորտեր, որոնք իրենց ծագումով պատկանում են տարբեր երկրների (աղ.): Ուսումնասիրվող տարատեսակներն ու սորտերը համեմատվել են տեղական սորտի հետ: Ուսումնասիրությունները կատարվել են 50-ական բույսի վրա: Բոլոր տարատեսակների ու սորտերի մոտ բուսոնակայման 50% դիտվել է ցանքից 60—70 օր հետո: Բուսոնակալումից 6—8 օր հետո տեղի է ունենում ծաղկում: Մաղկումը գնում է ցածից դեպի վեր՝ հաջորդաբար: Նայած գիշերվա ջերմաստիճանին՝ ծաղիկը բացվում է առավոտյան ժամը 7—10-ը և համապատասխանորեն փակվում ցերեկվա ժամը 2—5-ը:

Ուսումնասիրված տարատեսակների և սորտերի մոտ պտղակալումը 50%-ով կատարվել է ցանքից 70—85 օր հետո: Ըստ որում՝ բոլորից վաղ պտղակալում են հնդկական ծագում ունեցող Panchadhari և Shankerpalli սորտերը:

Ուսումնասիրվող տարատեսակներն ու սորտերը միմյանցից տարբերվում են, միաժամանակ, մորֆոլոգիական ցուցանիշներով՝ տերևաթիթեղի կտրր-տրվածությամբ, պտուղների ձևով, գույնով և թավոտությամբ: Հնդկական ծագում ունեցող *Var. sanguineus* Berland տարատեսակի և Red Wonder սորտի բույսերն ունեն անտոցիանի պիգմենտացիա: Այդ բույսերի պտուղներն ունեն նույնպիսի գունավորում:

Որոշ սորտերի մոտ պտուղները ծածկված են կոշտ մազմզուկներով, որոնք դժվարեցնում են նրանց օգտագործումը որպես բանջարեղեն: Կան ձևեր, որոնք ծածկված են նուրբ, փափուկ մազմզուկներով: Այդպիսին են ուսումնասիրված տարատեսակների մեծ մասը և մի քանի սորտեր՝ Panchadhari, Ladies finger, Mammoth Long Pod և Արգոս: Մինչդեռ տեղական սորտը ծածկված է համե-

մատաբար կոշտ մազմզուկներով: Ուսումնասիրված ձևերը տարբերվում են նաև բույսերի հասակով (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ

Բամիայի մի քանի տարատեսակների և սորտերի ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրված տարատեսակներն ու սորտերը	Ծագման վայրը	Մեկ բույսի միջին			Պտուղների երկարությունը սմ-ով	
		բարձրությունը սմ-ով	ձևավորված պտուղների թիվը	կշիռը գ-ով	սմ/ս	հատուն
Var. nobilis Berland	Իրան	80±4,1	25±1,9	160,2±7,8	6,0	17,0
Var. macrocarpus P. Medvedev	Կանադա	96±4,8	25±2,0	200,0±8,1	7,5	19,0
Var. dissectifolius P. Medvedev	Չինաստան	138±5,2	29±2,1	187,6±4,9	6,0	17,0
Var. sanguineus Berland	Հնդկաստան	144±5,1	27±2,1	192,8±7,9	8,5	22,0
Կորոտկոպլոդնայա 14	—	60±2,8	20±1,8	104,6±5,6	4,5	10,0
K—126	Բուլղարիա	108±3,9	52±2,9	210,0±9,3	8,0	18,0
Կորոտկոպլոդնայա	Աֆրիկա	100±4,0	32±2,5	100,0±5,5	4,0	11,0
K—108	ԱՄՆ	136±4,3	63±3,2	207,0±7,0	7,0	17,0
K—116	ԱՄՆ	60±2,9	25±1,8	162,0±6,3	6,0	17,0
Bame Cavacli	Ռումինիա	205±7,3	100±4,0	260,0±8,4	4,0	10,0
Panchadhari	Հնդկաստան	123±4,5	25±2,1	285,6±9,1	11,0	30,0
Red wonder	Հնդկաստան	134±4,5	31±2,3	192,0±8,0	9,5	19,0
Ladies finger	Հնդկաստան	155±4,9	36±4,0	282,2±8,9	11,5	26,0
Shankerpalli	Հնդկաստան	153±4,6	33±3,8	276,0±8,6	12,0	23,0
S—392—17	Հնդկաստան	90±4,0	17±1,9	150,2±6,9	9,0	16,0
K—131	Հնդկաստան	130±3,8	30±3,1	172,0±6,9	9,0	20,0
Mammoth Long Pod	Կանադա	94±3,9	17±1,8	168,0±5,7	9,5	19,0
Արզոս	Հունաստան	132±4,0	22±1,6	210,0±7,4	11,0	23,0
Տեղական	—	120±3,5	18±1,9	132,8±4,3	6,0	13,0


Ըստ Ս. Ս. Բերլյանդի [2] դասակարգման, բամիայի բարձրահասակ ձևերը, բացի բանջարանոցային կուլտուրա լինելուց, միաժամանակ հանդիսանում են թելատու: Ն. Ս. Բակուրաբը [1] նշում է, որ բամիան թելի որակով հետ չի մնում կենաֆից: Հատկապես արժեքավոր են ալնպիսի ձևերը, որոնք մշակվում են միաժամանակ որպես թելատու և բանջարանոցային կուլտուրաներ:

Ուսումնասիրված ձևերից բարձրահասակ են ումինական ծագում ունեցող Bame Cavacli սորտը, որը հասնում է միջին հաշվով, մինչև 205±7,3 սմ բարձրության, հնդկական ծագում ունեցող Ladies finger և Shankerpalli սորտերը, որոնք, միջին հաշվով, ունենում են 153±4,6—155±4,9 սմ բարձրություն:


Bame Cavacli սորտը աչքի է ընկնում ոչ միայն իր բարձրությամբ, այլև, միաժամանակ, մեկ բույսի վրա ձևավորված պտուղների թվով՝ 80±4,0

պտուղ: Սակայն պետք է նշել, որ այդ սորտի մոտ պտուղները մանր են, ապրանքային պտուղների (6 օրվա վարսանդների) երկարությունը հասնում է, միջին հաշվով, 4 սմ-ի, իսկ սերմային հասունացման հասած պտուղների մոտ՝ 10 սմ-ի: Այլ կերպ՝ պտուղը կարճ է և, բացի դրանից, ծածկված է կոշտ մազմզուկներով, հետևաբար և նրանք պիտանի չեն որպես բանջարեղեն օգտագործելու համար: Մեկ բույսի միջին բերքը կազմում է $260,0 \pm 8,4$ գ: Այս սորտը կարող է որպես ելանյութ ծառայել հիբրիդացման և հետագա ընտրության աշխատանքներում:

Այլ են Ladies finger և Shankerpalli սորտերը, որոնք, բարձրահասակ լինելու հետ մեկտեղ, ունեն խոշոր պտուղներ: Սովորաբար սննդի մեջ օգտա-



Նկ. 1. Բամիայի Ladies finger և տեղական սորտերի պտուղները:




Նկ. 2. Բամիայի Shankerpalli և տեղական սորտերի պտուղները:


գործվում են բամիայի երիտասարդ՝ ծաղկի բացվելուց 4—6 օրվա վարսանդները: Ladies finger սորտի մոտ ապրանքային պտուղների երկարությունը, միջին հաշվով, հասնում է 11,5 սմ-ի, հասուն պտուղների երկարությունը՝ 26,0 սմ-ի (նկ. 1) Shankerpalli սորտի մոտ ապրանքային պտուղներն ունեն 12,0 սմ, սերմային հասունացման հասած պտուղները՝ 23,0 սմ երկարություն (նկ. 2): Պտուղները նուրբ են, ծածկված թույլ և փափուկ մազմզուկներով: Մեկ բույսի վրա ձևավորված պտուղների միջին թիվը կազմում է $33 \pm 3,8$ — $36 \pm 4,0$, բերքը՝ $276,0 \pm 8,6$ — $282,2 \pm 8,9$ գ:

Բերքատվությամբ, պտուղների խոշորությամբ և նրբությամբ աչքի են ընկնում նաև հնդկական ծագում ունեցող Panchadhari (նկ. 3) կանադական ծագում ունեցող Mammoth Long Pod և հունական ծագում ունեցող Արգոս սորտերը (նկ. 4): Այդ սորտերի մոտ մեկ բույսի միջին բերքը կազմում է $168,0 \pm 5,7$ — $285,6 \pm 9,1$ գ: Ապրանքային պտուղների երկարությունը, միջին հաշվով, 9,5—11,0 սմ է, սերմային հասունացման հասած պտուղներինը՝

Panchadhari սորտի մոտ՝ 30,0 սմ: Տեղական սորտի մոտ ապրանքային պտուղների երկարությունը հասնում է 6,0 սմ-ի: Պտուղները ծածկված են համեմատաբար կոշտ մազմզուկներով, մեկ բույսի միջին բերքը $132,8 \pm 4,3$ գ է: Այսպիսով, բամիայի կուլտուրայի մի շարք տարատեսակների և սորտերի



Նկ. 3. Բամիայի Panchadhari և տեղական սորտերի պտուղները:



Նկ. 4. Բամիայի Արգոս և տեղական սորտերի պտուղները:

ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Արարատյան հարթավայրի պայմաններում մշակելու նպատակով ընտրել այդ արժեքավոր բանջարանոցային կուլտուրայի մի շարք լավագույն ձևեր:

Մեր ուսումնասիրած տարատեսակներից և սորտերից կարելի է մշակելու համար առանձնացնել հնդկական ծագում ունեցող Ladies finger, Shankerpalli, Panchadhari և հունական ծագում ունեցող Արգոս սորտերը, որոնք աչքի են ընկնում իրենց բերքատվությամբ, ապրանքային պտուղների խոշորությամբ ու նրբությամբ, ինչպես նաև մեկ բույսի վրա ձևավորված պտղաէլեմենտների թվով:

Երևանի պետական համալսարանի

կենսաբանական ֆակուլտետ

Ստացվել է 20. VII 1967 թ.

Т. А. СААКЯН

ИЗУЧЕНИЕ БАМИИ В УСЛОВИЯХ АРАРАТСКОЙ НИЗМЕННОСТИ
АРМЯНСКОЙ ССР

Настоящая работа посвящена изучению бамии (*Hibiscus esculentus*) в условиях Араратской низменности Армянской ССР, с целью выбора наилучших разновидностей и сортов этой культуры.

Материалом исследования послужили разновидности бамии: *Var. nobilis* Berland, *Var. macrocarpus* P. Medvedev, *Var. dissectifolius* P. Medvedev, *Var. sanguineus* Berland, а также сорта, по происхождению относящиеся к разным странам: Болгарии, Румынии, Индии, Греции, Малой Азии, Африке, США и Канаде.

Исходный материал был получен из Всесоюзного института растениеводства, Волгоградской опытной станции и Ташкентского сельскохозяйственного института.

Исследования показали, что по урожайности, крупности и нежности товарных плодов, а также по количеству оформившихся на одном растении плодоземелентов из изученных нами разновидностей и сортов бамии можно выделить сорта: индийского происхождения: *Ladies finger*, *Shankerpalli*, *Panchadhari* и сорт *Аргос*—греческого происхождения.

Сравнивая указанные сорта с местным сортом, можно их рекомендовать для возделывания в условиях Араратской низменности.

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Бакурас Н. С. Сельское хозяйство Узбекистана, I, 1962.
2. Берлянд С. С. Тр. по прикладной ботанике, генетике и селекции, т. XXIV, 1929—1930.